ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՄՆԷՊԾ-ՄԱԱՇՁԲ-25/119

ք. Երևան «16» «07» 2025թ.

Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լ. Ալեքսանյանի, ով գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և ՀՀ ՆԳՆ «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ը, որը հետագայում անվանվում է Կատարող, ի դեմս տնօրեն Ս. Մարգարյանի մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կատարողն իրականացնում է հետազննություն և տալիս է եզրակացություն ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Շահումյան փողոց թիվ 8 հասցեում գտնվող շենքի տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման վերաբերյալ:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Կատարողից պահանջել աշխատանքներն իրականացնել սույն պայմանագրով նախատեսված ժամկետների սահմանում:

2.1.2. Կատարողից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտականությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Ապահովել կատարողի անձնական անվտանգությունը և տրամադրել աշխատանքների կատարման համար անհրաժեշտ հավաստի ելակետային տվյալներ (տեղեկություններ, փաստաթղթեր, նյութեր, հետազոտման ենթակա օբյեկտներ և այլն):

2.2.2. Վճարել աշխատանքի կատարման արժեքը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել աշխատանքի կատարման համար անհրաժեշտ հավաստի ելակետային տվյալների (տեղեկություններ, փաստաթղթեր, նյութեր, հետազոտման ենթակա օբյեկտներ և այլն) տրամադրումը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Աշխատանքը կատարել և եզրակացությունը տրամադրել Պատվիրատուին սույն պայմանագրով սահմանված ժամկետներում:

3.Կատարման ժամկետները

3.1. Աշխատանքների կատարման ժամկետներն են՝
սկիզբը «16» «07» 2025թ., ավարտը «25» «07» 2025թ.:

4. Կատարված աշխատանքի համար վճարման չափը և կարգը

4.1. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման արժեքը կազմում է չորս հարյուր տաս հազար (410 000) ՀՀ դրամ, այդ թվում՝ ԱԱՀ:

4.2. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.1 կետով որոշված գումարի վճարումը կատարվում է աշխատանքի ավարտից և հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո, 10 աշխատանքային օրվա ընթացքում:

5.Պայմանագրի ուժի մեջ մտնելը և լուծումը

5.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

5.2. Պայմանագիրը կարող է ժամկետից շուտ լուծվել Պատվիրատուի պահանջով, որի դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է սույն պայմանագրի 4.1 կետով որոշված գումարի 50%-ը:

6. Այլ պայմաններ

6.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել կողմերի գրավոր համաձայնությամբ, որի վերաբերյալ կազմվում է համաձայնագիր կամ լրացուցիչ պայմանագիր, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.4. Սույն պայմանագիրը կազմվում է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

7.1. Պատվիրատու՝

Շրջակա միջավայրի նախարարության
Էկոպարեկային ծառայություն
Հասցե՝ ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ 900011023265
ՀՎՀՀ 00476409

7.2 Կատարող՝

«ՍՊՏԾ» ՊՈԱԿ
Հասցե՝ 0082 ք. Երևան,
Ծիծեռնակաբերդի խճուղի 8/1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն,
Հ/Հ 900018003443,
ՀՎՀՀ 01224751

Պատվիրատու՝

_____ Լ. Վեքսանյան

Կատարող՝

_____ Ս. Մարգարյան